



ՌՈՒԲԵՐՏ ՔՈԶԱՐՅԱՆ

ՀԱԱՀ ֆինանսահաշվային
ամբիոնի ասպիրանտ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԾԸ ԵՎ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Դրամաշրջանառության կարգավորումը և տնտեսական աճի ապահովումը երկրի մակրոտնտեսական քաղաքականության կարևորագույն հիմնախնդիրներից են: ՀՀ տնտեսական աճի և հեղափոխության ՀՆԱ-ի ապահովման գործընթացի գլխավոր հետադարձությունը չափազանց կարևոր նշանակություն ունի թե՛ տնտեսական, թե՛ գործնական առումով:

Համաշխարհային զարգացումը ուղեկցվում է տարբեր երկրների ֆինանսատնտեսական տարանջատումներով և ապահովվում է երկարաժամկետ տնտեսական աճով: Տնտեսական աճը երկրի տնտեսության զարգացման ամփոփ բնութագրիչն է, որը բազմագործոն երևույթների ամբողջություն է, ունի տնտեսական, քաղաքական, սոցիալական կարևորագույն նշանակություն, նպաստում է արտադրական ռեսուրսների սահմանափակության և հասարակության պահանջարկների անսահմանափակության հիմնախնդրի լուծմանը:

Մյուս կողմից, տնտեսության պետական կարգավորումը ընդգրկում է դրամաշրջանառության կարգավորման հիմնախնդիրները: Դրամաշրջանառության կարգավորումը, և առհասարակ՝ դրամավարկային և ֆինանսական քաղաքականությունը հարաճուն գործընթաց է, որը ճկուն կերպով պետք է արձագանքի բոլոր տնտեսի ներքին ու արտաքին ռիսկերին ու մարտահրավերներին:

Այս առնչությամբ սույն հոդվածում անդրադարձ է կատարվել շրջանառությունում կանխիկ դրամի և տնտեսության իրական հատվածի վիճակագրական ցուցանիշներին և վերլուծությունների հիման վրա ներկայացվել են եզրակացություններ, առաջարկություններ:

Հիմնաբառեր. ՀՆԱ, սովերային տնտեսություն, վիճակագրական վերլուծություն, կանխիկի սահմանափակում, միջազգային փորձ, օրենսդրական սահմանափակումներ

JEL: E51, O11

Ներածություն: Տնտեսական աճը բարդ ու բազմաբովանդակ երևույթ է, տնտեսագիտության տեսության և յուրաքանչյուր երկրի տնտեսական քաղաքականության կարևորագույն թիրախներից մեկը: Տնտեսական աճը հանրային արդյունքի ընդլայնված վերարտադրության դրսևորման ձևն է և հասարակական արդյունքի քանակական մեծացումն ու որակական կատարելագործումը, որը թույլ է տալիս ընդլայնել երկրի տնտեսության հնարավորությունները՝ հանրության պահանջմունքները լավագույնս բավարարելու համար: Տնտեսական աճի ցուցանիշի գնահատման և դրա բացասական բաղադրիչի՝ սովերային հատվածի սահմանափակման գործոններից մեկը դրամաշրջանառությունն է, որի նորմատիվ-իրավական կարգավորումը և ինստիտուցիոնալ բարելավումը ողջ տնտեսության արդյունավետ կազմակերպման հիմքն են: Կանխիկ դրամի շարժը, ըստ իր բնույթի, հիմնականում անտեսանելի գործընթաց է, քանզի կանխիկը մի անձից մյուսին փոխանցվում է առանց ձևակերպումների և գործարքների ամրագրման, ինչը սովերային տնտեսության գործունեության հիմնական պայմանն է: Հետևաբար, դրամաշրջանառության բարելավումը (կանխիկ դրամաշրջանառության կրճատման և անկանխիկի իրականացման ինստիտուտների ու կառուցակարգերի զարգացման ուղղությամբ) արդիական է և ունի կարևոր գիտագործնական նշանակություն: Միաժամանակ, գիտական շրջանակների կողմից, մեր կարծիքով, բավարար չափով ուսումնասիրված չեն խնդրի լուծման այլընտրանքային տարբերակները, որոնք առկա են տարբեր երկրներում, ինչպես նաև բացահայտված չեն միջազգային ուսանելի փորձի տեղայնացման հայաստանյան առանձնահատկությունները: Այսպիսով, տնտեսագիտական մտքի ակադեմիական շրջանակներում հիմնախնդրի առնչությամբ ձևավորված խրթնությունը և մեկնաբանման տարակարծությունները անհրաժեշտություն են առաջացրել ավելի խորը և համապարփակ ուսումնասիրության, ինչն էլ պայմանավորում և հիմնավորում է սույն հոդվածի կարևորությունը և արդիականությունը:

Գրականության ակնարկ: Դրամաշրջանառության կազմակերպման առանձնահատկությունները և սկզբունքները շուկայական տնտեսության պայմաններում ուսումնասիրվել են այնպիսի գիտնականների կողմից, ինչպիսիք են Ե.Ֆ. Ժուկովը, Դ.Մ. Իվանցևիչը, Ա.Յու. Կազակը, Օ.Ի. Լավրովիչը, Գ.Ս. Պանովան, հայրենական գրականության մեջ՝ Լ.Հ. Բադանյանը, Ա.Հ. Բայադյանը, Մ.Հ. Մուրադյանը և ուրիշներ: Սովերային տնտեսության և մասնավորապես՝ ՀՀ-ում տնտեսության մեջ սովերային ոլորտի գործունեության տարբեր ուղղությունների ուսումնասիրություններ կատարել են հայրենական և արևմտյան շատ գիտնականներ:

Պետական մակարդակով կանխիկ վճարումների և հաշվարկների նկատմամբ վարչական սահմանափակումներ կիրառվում են աշխարհի մի շարք երկրներում: Կանխիկ շրջանառության նկատմամբ բավականին խիստ

սահմանափակումներ կան օրինակ՝ ԱՄՆ-ում՝ 5000 ԱՄՆ դոլար,¹ Իտալիայում՝ 1000 եվրո,² Ֆրանսիայում՝ 3000 եվրո՝ մեկ գործարքի ժամանակ: Այնպիսի երկրներ, ինչպիսիք են Շվեդիան և Նորվեգիան, հայտարարել են մոտ ապագայում կանխիկ դրամի շրջանառությունից ամբողջությամբ հրաժարվելու մասին:

Հետազոտության մեթոդաբանություն: Հոդվածի նպատակն է բացահայտել ՀՀ-ում ստվերային տնտեսության ծավալների կրճատմանը միտված դրամաշրջանառության արդյունավետ կառուցվածքի ձևավորման խնդիրները: Մասնավորապես, հետազոտությունը խարսխված է վարչական սահմանափակումների նոր կառուցակարգերի, բանկային ենթակառուցվածքի արդիականացման, անկանխիկ վճարման համակարգի գործունեության համար իրավական դաշտի հետագա բարելավման և այլ խնդիրների վերլուծության վրա: Հետազոտության տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի տվյալները: Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են տնտեսափճակագրական, համեմատական, գրաֆիկական, համադրման, ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները:

Վերլուծություն: Ստորև բերված աղյուսակների ցուցանիշներով և դրանց վերլուծության արդյունքում գծանկարների օգնությամբ դիտարկենք տնտեսության իրական հատվածի վրա կանխիկ և անկանխիկ դրամաշրջանառության ազդեցությունները, որոնք բացահայտում են ստվերային տնտեսության ծավալների կրճատման հնարավորությունները: Հաշվի առնելով միջազգային բազմաթիվ հեղինակավոր կազմակերպությունների, վերլուծական կենտրոնների կողմից ավանդաբար հնգամյա կտրվածքով իրականացվող վերլուծությունները, իսկ հաճախ նաև՝ հնգամյա հեռանկարի կանխատեսումները՝ արժարժվող ցուցանիշների գծով մեր հաշվարկները ևս կատարվել են վերջին 5 տարիների՝ 2014-2018 թթ. կտրվածքով:

Աղյուսակ 1

Տնտեսության իրական հատվածի և շրջանառությունում կանխիկ դրամի ցուցանիշի փոխակալվածությունը՝ ըստ 2014-2018 թթ. տվյալների⁴

Անվանումները	Զ/մ	2014	2015	2016	2017	2018
Շրջանառությունում կանխիկ դրամ	մլրդ ՀՀ դրամ	348.4	345.5	390.9	445.2	477.0
Անվանական ՀՆԱ	մլրդ ՀՀ դրամ	4828.6	5032.1	5067.3	5569	6002.7
Կանխիկ/անվանական ՀՆԱ	%	7.22	6.87	7.71	7.99	7.95

Աղյուսակ 1-ի տվյալները վկայում են, որ շրջանառությունում գտնվող կանխիկի ցուցանիշը ուսումնասիրվող 5 տարիների ընթացքում ունեցել է շարունակական աճի միտում (128.6 մլրդ ՀՀ դրամ կամ 36.9%), ինչը նաև տե-


¹ Տե՛ս U.S. Federal Reserve, պաշտոնական կայքէջ՝ <http://www.federalreserve.gov/releases/>:

² Տե՛ս ECB. պաշտոնական կայքէջ՝ <http://www.ecb.int/stats/hist>

³ Տե՛ս Համաշխարհային բանկի պաշտոնական կայքէջ՝ <http://www.worldbank.org/>

⁴ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2019, էջ 236, 2016, էջ 223, ՀՀ վիճակագրական կոմիտեի և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի մամուլի հաղորդագրություն, 20.02.2019 թ.՝ armstat.am, ՀՀ ԿԲ հրապարակումներ՝ <http://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>:

սանելի է ՀՆԱ-ի ցուցանիշի պարագայում (1174.1 մլրդ ՀՀ դրամ կամ 24.3%): Սա էլ իր հերթին ապացուցում է այն պնդումը, որ շրջանառությունում գտնվող կանխիկի և ՀՆԱ-ի միջև կա օրգանական կապ, որն էլ ներկայացնենք կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծության օգնությամբ (գծապատկեր 1)⁵:



Գծապատկեր 1. ՀՀ ՀՆԱ-ի և շրջանառությունում կանխիկ դրամի ցուցանիշի փոխկապակցվածությունը⁶

Մեր հաշվարկները վկայում են, որ բերված ցուցանիշների միջև կապը, հիմք ընդունելով 2014-2018 թթ. տվյալները, դրական է և խիստ ուժեղ, քանզի կոռելյացիայի գործակցի մեծությունը 0.9208 է: Սա էլ իր հերթին նշանակում է, որ ՀՀ ՀՆԱ ցուցանիշը խիստ կախվածության մեջ է շրջանառությունում կանխիկ դրամի ցուցանիշից:

Միաժամանակ, մեր կողմից բերված ռեգրեսիոն հավասարումը ցույց է տալիս, որ շրջանառության կանխիկի 1 միավորով ավելացումը հանգեցնում է ՀՆԱ-ի ծավալային աճի 7,8452 միավորի չափով:

Շարունակելով վերլուծությունը՝ ուսումնասիրենք նաև առևտրի և ծառայությունների ոլորտների շրջանառության և շրջանառությունում գտնվող կանխիկի միջև կապը (հաշվի առնելով, որ ՀՀ ՀՆԱ-ի միջինում 70%-ը կազմում են այս 2 ոլորտները):

Վիճակագրական տվյալները ներկայացնենք աղյուսակի տեսքով (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Առևտրի և ծառայությունների ոլորտների ու շրջանառությունում կանխիկ դրամի ցուցանիշի փոխկապակցվածությունը՝ ըստ 2014-2018 թթ. տվյալների⁷

Անվանումները	Չ/մ	2014	2015	2016	2017	2018
Շրջանառությունում կանխիկ դրամ	մլրդ ՀՀ դրամ	348.4	345.5	390.9	445.2	477.0
Առևտուր և ծառայություններ	մլրդ ՀՀ դրամ	3503.2	3431.7	3514.0	4075.2	4969.3
Կանխիկ / առևտուր և ծառայություններ	%	9.9	10.1	11.1	10.9	9.6


⁵ Հաշվարկները կատարել է հեղինակը:

⁶ Գծապատկերը կազմել է հեղինակը:

⁷ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2019, էջ 247, 2016, էջ 230, ՀՀ վիճակագրական կոմիտեի և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի մամուլի հաղորդագրություն, 20.02.2019 թ.՝ armstat.am,

ՀՀ ԿԲ հրապարակումներ՝ <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>:

Ցուցանիշների միջև վիճակագրական կապն արտահայտենք կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծության օգնությամբ (գծապատկեր 2)⁸:



Գծապատկեր 2. Առևտրի և ծառայությունների ոլորտների ու շրջանառությունում կանխիկ դրամի ցուցանիշի փոխկապվածությունը⁹

Մեր կատարած հաշվարկները ցույց են տալիս, որ բերված ցուցանիշների միջև կապը, հիմք ընդունելով 2014-2018 թթ. տվյալները, ուղիղ համեմատական է և բավական սերտ, քանի որ կոռելյացիայի գործակցի մեծությունը 0.8403 է: Սա նշանակում է, որ իրական հատվածը բնորոշող ցուցանիշը կախվածության մեջ է շրջանառությունում կանխիկ դրամի ցուցանիշից:

Միաժամանակ, մեր կողմից բերված ռեգրեսիոն հավասարումը ցույց է տալիս, որ շրջանառության կանխիկի 1 միավորով ավելացումը բերում է առևտրի և ծառայությունների ծավալային աճի 10,219 միավորի չափով, մինչդեռ այլ գործոնների ազդեցությունն արտահայտվում է հակադարձ համեմատական կապով:

Դրամական զանգվածի միտումների համատեքստում, հաշվի առնելով, որ ՀՀ ՀՆԱ-ի ավելի քան 90%-ն ուղղվում է սպառման ծախսերին, վերջնական սպառման ծախսերի կազմը վերլուծենք ըստ վերջին 5 տարիների՝ 2014-2018 թթ. տվյալների:

Աղյուսակ 3

Վերջնական սպառման ծախսերի կազմը՝ ըստ 2014-2018 թթ. տվյալների, մլրդ ՀՀ դրամ¹⁰

Ցուցանիշները	2014	2015	2016	2017	2018
Վերջնական սպառման ծախսեր, այդ թվում՝	4714.3	4599.4	4598.6	5113.0	5448.6
տնային տնտեսությունների	4110.2	3915.9	3892.7	4288.7	4638.7
պետական հիմնարկների	583.6	661.3	681.8	792.2	772.0

⁸ Հաշվարկները կատարել է հեղինակը:
⁹ Հաշվարկները կատարել է հեղինակը:
¹⁰ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2019, էջ 263, 2016, էջ 247:

Աղյուսակ 3-ում բերված տվյալներից ակնառու է ուսումնասիրվող 5 տարիների ընթացքում վերջնական սպառմանն ուղղված ծախսերի աճի միտումը՝ 734.3 մլրդ դրամ կամ 15.6%: Փողի զանգվածի ավելի քան 60%-անոց աճի պարագայում (իսկ կանխիկի դեպքում՝ 128.6 միլիարդ դրամ կամ 36.9%), վերջնական սպառման ծախսերն աճ են արձանագրել ընդամենը 15.6%-ի չափով, ինչից կարելի է եզրակացնել, որ կանխիկի «առյուծի բաժինը» սպասարկում է ստվերային տնտեսությանը, ինչն ավելի քան մտահոգիչ է:

Կանխիկ դրամաշրջանառության սահմանափակումից և, համապատասխանաբար, անկանխիկ վճարումների և հաշվարկների տեսակարար կշռի ավելացումից սովորաբար եզրակացվում է, որ ստվերային տնտեսության մասնաբաժինը նվազում է, և գործարարների ու հասարակության միջև հարաբերությունների թափանցիկությունը մեծանում է: Այս առումով, հարցն ակնհայտորեն բխում է դրամաշրջանառության օպտիմալ կառուցվածքի, այն է՝ կանխիկ և անկանխիկ մասերի օպտիմալ հարաբերակցության սահմանումից:

Այս առումով ՀՀ-ում նույնպես կատարվել և այժմ էլ կատարվում են որոշակի քայլեր, որոնցից ամենավերջինը, թերևս, 2019 թ. ՀՀ կենտրոնական բանկի կողմից շրջանառության մեջ դրված «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծն է, որով մասնավորապես առաջարկվում է ՀՀ տարածքում ֆիզիկական անձանց, անհատ ձեռնարկատերերի, նոտարների և կազմակերպությունների կողմից 2020 թ. հունվարի 1-ից՝ 2 մլն, 2021 թ. հունվարի 1-ից՝ 1 մլն, իսկ 2022 թ. հունվարի 1-ից՝ 300,000 ՀՀ դրամը գերազանցող ապրանքների (գույքի) իրացման, ապրանքների (գույքի) օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման գործարքներում (գործարքի գումար) դրանց դիմաց վճարումը և վճարի ստացումը իրականացնել անկանխիկ ձևով՝ անկախ վճարման կարգից, եթե այլ օրենքներով այդ գործարքների դիմաց վճարման ավելի ցածր սահմանաչափեր նախատեսված չեն¹¹:

Առաջարկվում է նաև օրենքով կամ աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատավարձերը, կրթաթոշակները, ներկայացուցչական ծախսերի դիմաց վճարումները, գործուղման նպատակով, ինչպես նաև այլ վճարումները, բժշկական կազմակերպություններում և կրթական հիմնարկություններում մատուցված բժշկական և կրթական ծառայությունների բոլոր տեսակի վճարումները կատարել անկանխիկ ձևով. 2020 թ. հունվարի 1-ից՝ Երևան քաղաքում, 2021 թ. հունվարի 1-ից՝ ՀՀ մարզերի վարչական կենտրոններում, 2022 թ. հունվարի 1-ից՝ ՀՀ այլ բնակավայրերում:

Պետական կամ համայնքային բյուջեներից կատարվող ցանկացած վճարում, բացառությամբ կենսաթոշակների, կենսաթոշակների համար սահմանված կարգով վճարվող պետական նպաստների և այլ դրամական վճարների, ինչպես նաև՝ խնամքի նպաստի, առաջարկվում է կատարել անկանխիկ եղանակով: Ապահովագրական հատուցումների համար ևս առաջարկվում է անկանխիկ եղանակը:

¹¹ <https://www.e-draft.am/projects/1950/about>

Եզրակացություններ

1. Հայաստանում ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև դրամական գործարքների առավելագույն չափի վարչական սահմանափակման ներդրումը օգտակար միջոց է սուվերի դեմ պայքարում, բայց դրա հաջող իրականացման համար անհրաժեշտ են մի շարք նախապատրաստական միջոցառումներ.

- բանկային ենթակառուցվածքի արդիականացում՝ ներառյալ վճարային տերմինալների լայնածավալ ներդրումը երկրում, բանկի հետ հաճախորդների հարաբերությունների պարզեցում,
- անկանխիկ վճարման համակարգի գործունեության համար իրավական դաշտը կարգավորող նորմատիվ ակտերի բարելավում,
- բնակչության շրջանում բացատրական աշխատանքների իրականացում՝ բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացման համար:

2. Սուվերային տնտեսության չափի և շրջանառության մեջ գտնվող կանխիկ դրամի զանգվածի միջև առկա է ուղիղ համեմատական կապ: Միևնույն ժամանակ, կանխիկ դրամաշրջանառության սահմանափակումից և, համապատասխանաբար, անկանխիկ վճարումների և հաշվարկների տեսակարար կշռի ավելացումից սովորաբար եզրակացվում է, որ սուվերային տնտեսության մասնաբաժինը նվազում է, և գործարարների ու հասարակության միջև հարաբերությունների թափանցիկությունը մեծանում է: Այս առումով հարցն ակնհայտորեն բխում է դրամաշրջանառության օպտիմալ կառուցվածքի, այն է՝ կանխիկ և անկանխիկ մասերի օպտիմալ հարաբերակցության սահմանումից: Նշենք, որ ՀՀ-ում ևս կատարվում են որոշակի քայլեր:

3. Ամփոփելով դրամաշրջանառության արդյունավետության բարձրացման ինստիտուցիոնալ հեռանկարները ՀՀ-ում՝ կարող ենք փաստել, որ այդ ուղղությամբ ինստիտուցիոնալ հիմքերի բարելավմանը միտված ուսումնասիրությունները հավասարապես առնչվում են պետության կարգավորիչ գործառույթն իրականացնող ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքներին և ՀՀ Կառավարության որոշումներին, ՀՀ ԿԲ նորմատիվային և իրավական այլ ակտերին, ինչպես նաև սպառողների վարքագծով պայմանավորված այն երևույթներին, որոնք կարող են խթանել կամ խոչընդոտել կանխիկ դրամի շրջանառության ավելացումը և սուվերային տնտեսության մասշտաբների աճը:

4. Տնտեսությունում կանխիկի ծավալների կրճատումը կարևորվում է հետևյալ առումներով. մի կողմից՝ այն կարող է մեծապես նպաստել երկրի ֆինանսական միջոցների կառավարելիության էական բարձրացմանը, սուվերային երևույթների սահմանափակմանը և հարկային եկամուտների ավելացմանը, մյուս կողմից՝ բանկային համակարգի գործունեության բարելավմանը և տնտեսության զարգացմանը: Դրանք կարող են լինել ինչպես ուղղակի կամ միկրոտնտեսական, այնպես էլ անուղղակի կամ մակրոտնտեսական:

5. Կանխիկ դրամի շարժի սահմանափակման, հետևապես՝ սուվերային գործընթացներին հակազդելու ուղղությամբ հավասարապես կարևոր են ինչպես պետության, այնպես էլ քաղաքացիական հասարակության, այլ խոսքով՝ սպառողների համադրված և հետևողական գործողությունները: Նման

կարևոր որակական անցումն ապահովելու համար համապատասխան վճարային ենթակառուցվածքի ներդրումն ու զարգացումը անհրաժեշտ են թե՛ մասնավոր, թե՛ հանրային մակարդակով: Միևնույն ժամանակ, կարևոր է նաև իրազեկել սպառողներին, թե ինչպես է ստվերային տնտեսության գործունեությունն ազդում տնտեսության ընդհանուր վիճակի, հանրային ծառայությունների, սոցիալական ապահովության մակարդակի բարձրացման վրա և շահադրդել նրանց՝ թույլ չտալու չհայտարարագրվող և չհարկվող, կանխիկ դրամով միջնորդված գործարքներ:

Օգտագործված գրականություն

1. Եվրոպայի կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջ՝ www.ecb.int/stats/hist:
2. Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք՝ <https://www.e-draft.am/projects/1950/about>:
3. Համաշխարհային բանկի պաշտոնական կայքէջ՝ www.worldbank.org/:
4. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2016, 2018:
5. ՀՀ վիճակագրական կոմիտեի և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի մամուլի հաղորդագրություն, 20.02.2019 թ., armstat.am:
6. ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ՝ www.cba.am:
7. U.S. Federal Reserve, պաշտոնական կայքէջ՝ www.federalreserve.gov/releases/:

РОБЕРТ КОЧАРЯН

Аспирант кафедры финансов и
бухгалтерского учета НАУА

Экономический рост и вопросы ограничения наличного денежного обращения в Республике Армения.—

Регулирование денежного оборота, с одной стороны, и обеспечение экономического роста, с другой, являются одними из важнейших вопросов макроэкономической политики страны. Научные исследования экономического роста Республики Армения и, следовательно, процесса обеспечения ВВП чрезвычайно важны как в теоретической, так и в практической областях.

Мировое развитие сопровождается финансовыми и экономическими колебаниями в разных странах и поддерживается долгосрочным экономическим ростом. Экономический рост является сводной характеристикой экономического развития страны, которая представляет собой комплекс многоплановых явлений, имеет экономическое, политическое и социальное значение, способствует решению проблемы ограничения производственных ресурсов и ограничения общественных потребностей.

С другой стороны, государственное регулирование экономики охватывает проблемы регулирования обращения денег. Регулирование оборачиваемости и денежно-кредитная и финансовая политика в целом являются очень динамичным процессом, который должен гибко реагировать на все виды внутренних и внешних рисков и вызовов.

В связи с этим в данной статье рассматриваются статистические показатели реального сектора экономики РА, наличного денежного обращения, а на основании сделанного анализа сделаны выводы, представлены соответствующие рекомендации.

Ключевые слова: ВВП, теневая экономика, статистический анализ, денежные ограничения, международный опыт, законодательные ограничения

JEL: E51, O11

ROBERT KOCHARYAN

PhD Student at the Chair of
Finance and Accounting at ANAU

Economic Growth and Issues of Limitation of Cash Circulation in the Republic of Armenia.—

The regulation of money circulation, on the one hand, and the provision of economic growth, on the other, are among the most important

issues of the country's macroeconomic policy. Scientific research on the economic growth of the Republic of Armenia and hence on the process of securing the GDP is extremely important in both theoretical and practical fields.

World development is accompanied by financial and economic fluctuations in different countries and is sustained by long-term economic growth. Economic growth is a summary characteristic of the country's economic development, which is a set of multifaceted phenomena, is of economic, political and social importance, contributes to the solution of the problem of limitation of production resources and limitation of public needs.

On the other hand, the state regulation of the economy encompasses the problems of regulating money circulation. Money circulation regulation is a highly dynamic process that must respond flexibly to all kinds of internal and external risks and challenges.

In this regard, this paper discusses the statistical indicators of the real sector of the economy of Armenia, cash circulation, and based on the analysis performed, conclusions are drawn, relevant recommendations are presented.

Key words: *GDP, shadow economy, statistical analysis, limitation of cash circulation, international experience, legislative restrictions.*
JEL: E51, O11